



Gift of the United States Government



*Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA ROLI)
հայաստանյան ներկայացուցչության*

*«Իրավաբանական աջակցություն Հայաստանում
տեղահանված և հակամարտությունից տուժած անձանց
համար» ծրագրի շրջանակներում*

**Հայաստանում տեղահանված
անձանց աջակցման
ծառայությունների
տեղեկատվական թերթիկ**

*ԾՐԱԳԻՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՒՄ Է ԱՄՆ ՊԵՏԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ,
ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ և ՄԻԳՐԱՅԻՍՅԻ ԲՅՈՒՐՈՅԻ ԿՈՂՄԻՑ*

Երևան, օգոստոս, 2018թ.

ՀՀ սփյուռքի նախարարություն

Հասցե. Երևան, Վազգեն Մարգարյան 3

Հեռ. 010 58 56 01

Էլ. փոստ. middleeast@mindiaspora.am, info@mindiaspora.am

Աջակցման շրջանակ

ՀՀ Նախագահի հանձնարարությամբ ՀՀ սփյուռքի նախարարությունը համակարգում է ՀՀ կառավարության, միջազգային, հասարակական, բարեգործական, սփյուռքյան կազմակերպությունների ջանքերը՝ ուղղված Սիրիական հակամարտության հետևանքով տեղահանված և Հայաստանում պաշտպանություն հայցող անձանց հրատապ օգնությանը, աջակցությանը և ինտեգրման (այդ թվում՝ զարգացմանը միտված) խնդիրների լուծմանը:

Նախորդ տարիներին ՀՀ սփյուռքի նախարարության համակարգմամբ և գործընկեր կառույցների հետ փոխգործակցությամբ (ինչպես առանձին-առանձին, այնպես էլ համատեղ) լուծվել են Սիրիական հակամարտության հետևանքով տեղահանված և Հայաստանում պաշտպանություն հայցող անձանց համար կենսական նշանակություն ունեցող գրեթե բոլոր խնդիրները (փաստաթղթային և իրավական հարցերի դյուրացում, անվճար բուժօգնություն, ուսման վարձավճարների, բնակարանային վարձերի փոխհատուցում, արտոնյալ պայմաններով վարկերի տրամադրում, լեզվամշակութային ինտեգրում և կենսական նշանակության բազմաթիվ այլ խնդիրներ):

Նախարարության պաշտոնական կայքէջի՝ «Միրիահայերի համար» անկյուն էջում, Դուք կարող եք տեղեկանալ ՀՀ սփյուռքի նախարարության և իր գործընկեր կազմակերպությունների կողմից սիրիահայերի համար իրականացվող աջակցության և ինտեգրման ծրագրերի, ինչպես նաև սիրիահայերի հիմնախնդիրների լուծմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ:

Նրանք, ովքեր խորհրդի, հարցերի, բողոքների, առաջարկությունների, խորհրդատվության կամ աջակցության կարիք ունեն, կարող են դիմել ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի Մերձավոր և Միջին Արևելքի Հայ համայնքների վարչություն

(Հեռ.՝ 010 58-56-01, ներքին 610,

էլ.փոստ՝

middleeast@mindiaspora.am):

Պոտենցիալ շահառուներ

Միրիական հակամարտության հետևանքով տեղահանված և Հայաստանում պաշտպանություն հայցող անձինք:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության

Միգրացիոն պետական ծառայություն

Հասցե. Երևան, Կարապետ Ուլենցու փ. 31

Հեռ. 060 27 50 03

Էլ. փոստ. migrationservice.sms@mta.gov.am

Աջակցման

ըրջանակ

(Հումանիտար)

- Ապաստան հայցողների ընդունում,
- Ապաստան հայցողի վկայականի տրամադրում,
- Փախստականի կարգավիճակի որոշում:

(Սոցիալ-տնտեսական և մշակութային ինտեգրում)

- ՀՀ-ում փախստական ճանաչված անձանց կարիք- ների գնահատում և ինտեգրման պլանի մշակում,
- Գնահատված կարիքներին համապատասխան փախստականների ուղղորդում՝
 - Հայոց լեզվի դասընթացներ իրականացնող կազմակերպություն,
 - Քաղաքացիական դասընթացներ իրակա- նացնող կազմակերպություն,
 - Այլ (կրթական, բժշկական, զբաղվածու- թյան, սոցիալական, իրավաբանական) օժանդակություն ցուցաբերող մարմին- ներ/կազմակերպություններ,
- Ժամանակավոր կացարանի տրամադրում:

Պոտենցիալ շահառուներ

Ապաստան հայցողներ, փախստականներ:

**Հայաստանում Միավորված ազգերի
կազմակերպության փախստականների հարցերով
գերագույն հանձնակատարի ներկայացուցչություն**

Հասցե. Երևան, Պետրոս Ադամյան 14
Հեռ. 010 56 47 71, 010 58 48 92, , 091 41 53 87
Էլ. փոստ. armye@unhcr.org

Աջակցման շրջանակ

Հիմնական գործունեություն

**Պաշտպանություն և որակյալ ապաստանի
ընթացակարգեր**

- Հետագա օրենսդրական բարեփոխման գործընթացների և օրենսդրության լիարժեք իրագործման խթանում:
- Միգրացիոն ծառայության հետագա կարողությունների զարգացում՝ դասընթացների և տեխնիկական աջակցության միջոցով:
- Ռազմավարական դատական ներգրավվածություն՝ դատավորների և իրավաբանների համակարգված վերապատրաստման, իրավաբանական աջակցության ու խորհրդատվության տրամադրման և ռազմավարական դատավարության միջոցով:
- Սահմանների համակարգված մշտադիտարկում, այցեր քրեակատարողական հիմնարկներ և վերապատրաստման դասընթացներ սահմանապահների համար:

- Տեղահանված անձանց կարգավիճակի վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացման միջոցառումներ՝ ուղղված վերջիններիս պաշտպանությանը և ինտեգրման խթանմանը:
- Մտահոգության առարկա հանդիսացող անձանց ներգրավումը հանրային ծառայությունների և զբաղվածության համակարգերում, ուղղորդման մեխանիզմների ամրապնդում և գործընկերային հարաբերությունների զարգացում:

Առաջնային կարիքներ և հիմնական ծառայություններ

- Համակողմանի մարդասիրական արձագանքման ցանցերի և ուղղորդման մեխանիզմների պահպանում և ընդլայնում:
- Առավել խոցելի մտահոգության առարկա հանդիսացող անձանց համար դրամական աջակցության տրամադրում, ներառյալ բնակարանների վարձի մասնակի փոխհատուցում և բազմաֆունկցիոնալ դրամաշնորհներ (օրինակ՝ ձմեռացման աջակցություն, միանվագ դրամական աջակցություն նոր ժամանողների համար և այլն):
- Առավել խոցելի մտահոգության առարկա հանդիսացող անձանց համար լրացուցիչ առողջապահական ծառայությունների մատուցում, անհատական խնամք տարեց և անկողնային հիվանդ փախստականների համար:

- Ժամանակավոր սոցիալական կացարաններ մտահոգության առարկա հանդիսացող անձանց համար՝ կառավարության և հկ գործընկերների կողմից տրամադրվող և ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից վերանորոգված/ կահավորված:
- Սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում, սեռով և գենդերով պայմանավորված բռնության կանխարգելում և արձագանք:

Երկարաժամկետ լուծումների խթանում՝ ինտեգրման և ինքնաբավության խթանման միջոցով

- Լեզվի դասընթացների կազմակերպում, միջոցառումներ՝ ուղղված մշակութային և սոցիալական ադապտացիային, «ինչպես Հայաստանում զբաղվել գործարարությամբ» խորագրով դասընթացներ, ինչպես նաև մասնագիտական դասընթացներ տեղահանված սկսնակ գործարարների համար՝ զուգորդված ուսուցողական ծրագրերի և շուկա մուտք գործելու աջակցության հետ:
- Կենսապահովման ծրագրեր՝ փոքր դրամաշնորհների և միկրովարկերի տրամադրման միջոցով:
- “Ընտանիքի ընկեր”, “Միացիր համայնքին” և “Երկուսով աշխատանքի համար” ծրագրեր,

համայնքի հավաքագրում, երիտասարդների
ինտեգրման հատուկ միջոցառումներ:

Ապաքաղաքացիության կանխարգելում և կրճատում

- Քաղաքացիության մասին օրենսդրության
փոփոխությունների խթանում և
ապաքաղաքացիության որոշման
գործընթացների կիրառում:

ՄԱԿ ՓԳՀ-ն շնորհակալ է իր դոնորներին՝ ՄԱԿ ՓԳՀ-ի
գործունեությանը Հայաստանում աջակցելու նպատակով
կատարված ներդրումների համար:

Պոտենցիալ շահառուներ

Փախստականներ, ապաստան հայցողներ,
փախստականի նման իրավիճակում հայտնված անձինք,
քաղաքացիություն չունեցող անձինք:

Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA ROLI)

հայաստանյան ներկայացուցչություն

Հասցե Երևան, Ալեք Մանուկյան 9, 2-րդ հարկ, № 202
Հեռ. 060 61 22 90, 060 61 22 92, 060 61 22 93, 060 61 22 94
Էլ. փոստ. alina.yarmaloyan@abaroli.org

Աջակցման շրջանակ

(2016թ.-ի նոյեմբերից մինչև 2018թ.-ի օգոստոս)

(Իրավական և սոցիալ-տնտեսական ինտեգրում)

- Իրավաբանական խորհրդատվություն
հնարավոր խնդիրների/հարցերի լայն շրջանակի
վերաբերյալ, այդ թվում`
 - Հայաստանի
Հանրապետության մուտքի
վիզայի ստացում
 - ՀՀ-ում բնակության օրինականացում
 - ՀՀ քաղաքացիության ստացում
 - Փախստականի կարգավիճակի ստացում
 - Կացության կարգավիճակի ձեռքբերում
 - Ծննդի պետական գրանցում
 - Ամուսնության (ամուսնալուծության)
պետական գրանցում
 - Մահվան պետական գրանցում
 - Զինվորական ծառայություն
 - Սոցիալական իրավունքներ
 - Կրթության իրավունք
 - Աշխատանքի ընտրություն
 - Բժշկական օգնություն
 - Նպաստների վերաբերյալ հարցեր

- *Հաշմանդամության վերաբերյալ հարցեր*
- *Հանրային ծառայությունների համարանիշի վերաբեր-յալ հարցեր*
- *Մշտական բնակության հասցեում հաշվառվելու վերա-բերյալ հարցեր*
- *Վարորդական վկայականի ստացում*
- *Անվան փոփոխման վերաբերյալ հարցեր*
- *Ընտրելու իրավունք*
- *Մաքսային օրենսդրություն*
- *Ձեռնարկատիրական գործունեություն*
- *Հարկերի վերաբերալ հարցեր*
- *Այլ հարցեր*
- Իրավաբանական բնույթի փաստաթղթերի կազմում,
- Դատական ներկայացուցչություն (ռազմավարական նշանակության գործերով),
- Իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ուղղված դասընթացներ թե՛ մեծահասակ, թե՛ փոքրահասակ շահառուների համար,
- Հաճախ տրվող իրավական հարցերի տեղեկատվական ձեռնարկի լրամշակում (արևելահայերեն և արևմտահայերեն տարբերակներով)։

[http://olp.advocates.am/mod/folder/view.php?id=286:](http://olp.advocates.am/mod/folder/view.php?id=286)

Պոտենցիալ շահառուներ

Տեղահանված անձինք, այդ թվում՝ փախստականներ, ապաստան հայցողներ, քաղաքացիություն ստացած և ներքին տեղահանված անձինք:

**«Միրիահայերի միություն» հասարակական
կազմակերպություն**

Հասցե. Երևան, Բաղրամյան 18, 203 սենյակ

Հեռ. 095255355

Էլ. փոստ. info@sau.am

Աջակցման շրջանակ

(2018թ.-ի հունվարից մինչև 2018թ.-ի դեկտեմբեր)

(Միրիահայերի տնտեսական ինտեգրում, ՀՀ-ում հայրենադարձության խթանում)

- «Ինֆոհար» ծրագրի շրջանակներում մեկ պատուհանի սկզբունքով ուղղորդում հայկական բիզնես միջավայրում, բիզնես ծառայությունների տրամադրում ոլորտի ներկայացուցիչ կառույցների միջոցով,
- «Միրիահայերի արդյունաբերական գոտի» ծրագրի շրջանակներում արտադրական/աշխատանքային տարածքների տրամադրում սիրիահայ միության անդամ հանդիսացող սիրիահայ գործարարներին՝ արտոնյալ վարձակալական հիմունքներով՝ սեփական արտադրությունը կազմակերպելու համար,
- Միրիահայերի միության անդամակցության 3 տարբեր փաթեթների շրջանակներում սիրիահայերին տեղեկատվությամբ ապահովում, ձեռներեցներին,
- Վանի, Մարաշի և այլ հայկական ազգային ասեղնագործությունների դասընթացների կազմակերպում,

- Ցուցահանդես-վաճառքների կազմակերպում սիրիահայ ձեռներեցների համար ինչպես Սիրիահայերի միության անդամների համար, այնպես էլ գործընկեր կառույցների համապատասխան ծրագրերի շրջանակներում տրամադրվող ծառայությունների շրջանակներում,
- Այլ միջամտություններ պոտենցիալ թիրախային շահառուների տնտեսական ինտեգրման պահանջներին համապատասխան՝ ըստ իրավիճակի:

Պոտենցիալ շահառուներ

Հայաստան տեղափոխված և Հայաստանում հաստատվել փորձող սիրիահայեր, սիրիահայ ձեռներեցներ, փոքր, միջին և խոշոր սիրիահայ գործարարներ:

Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն

Հասցե. [Երևան, Զաքարիա Քանաքեռցու \(Սարկավագի\) փող., 1](#)

[շենք](#)

Հեռ. [011 51 22 51](#)

Էլ. փոստ. ccsaingo@yahoo.com

Աջակցման շրջանակ

(Սոցիալ-տնտեսական ինտեգրում)

- Կրթաթոշակների (ուսման վարձի 50%-ի չափով) տրամադրում (նախատեսված է 2018թ.-ի օգոստոսից),
- Համակարգչային բազային դասընթացների կազմակերպում,
Մեղանի ձևավորում, ֆուրշեթ դասընթացների կազմակերպում,
Ռուսերեն և արևելահայերեն լեզուների կարճաժամկետ (3 ամիս, որից հետո տրամադրվում է համապատասխան վկայական) դասընթացների կազմակերպում:

(Մշակութային ինտեգրում)

- Պարի դասընթացների կազմակերպում գեղագիտության ազգային կետրոնի պարային ստուդիայի հետ համատեղ,
- Ցուցահանդես վաճառքի կազմակերպում ձեռագործ աշխատանքների համար,
- Ամառային ճամբարների կազմակերպում:

(Հումանիտար)

- Մննդի, հիզիենիկ պարագաների փաթեթի և հագուստի տրամադրում,

- Վիրահատությունների և դեղորայքի գումարի միջ- նորդում, Հայկական բարեգործական ընդհանուր միության և Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության հետ համագործակցությամբ:

Պոտենցիալ շահառուներ

Միրիայից տեղահանված
հայեր:

**«ՀԱԼԵՊ» Հայրենակցական բարեսիրական
հասարակական կազմակերպություն**

Հասցե. [Երևան, Հյուսիսային պող. 11](#)

Հեռ. [010 54 53 69](tel:010545369)

Էլ. փոստ. info@aleppo-ngo.org

Աջակցման շրջանակ

(Սոցիալ-տնտեսական ինտեգրում)

«Հյուրընկալ և ընտանիք մը»

Այս ծրագրի հիմնական նպատակն է կասեցնել Հայաստանից սիրիահայերի արտագաղթելու հրատապ երևույթը՝ աջակցելով սիրիական համայնքի առջև ծառայած բնակարանային խնդրի լուծմանը:

Ծրագիրն իրականացվում է բարերարների նյութական աջակցությամբ, ովքեր, ծրագրում ներդնելով 15,000 – 25,000 ԱՄՆ դոլարի չափով գումար, հնարավորություն են ունենում գնել բնակարաններ ու գրանցել իրենց (բարերարների) անուններով:

Ծրագրի շրջանակում բնակարանները տրամադրվում են 5-7 տարի ժամկետով *առավել*

խոցելի դրությունում հայտնված սիրիահայ ընտանիքներին (առանց վարձ- ավճարի)

նախապես սահմանված պայմաններով: Համաձայն «ՀԱԼԵՊ» ՀԲՀԿ-ի և ՄԱԿ ՓԳՀ-ի միջև սույն ծրագրի շրջանակում կնքված փաստաթղթի վերջինս տրամադրում է կահույք ձեռք բերված բնակարանների համար:

Այս ծրագրի շրջանակում «ՀԱԼԵՊ» ՀԲՀԿ-ը համագործակցում է նաև Global Hope Network International-ի հետ սիրիահայ ընտանիքների բնակարան առաջարկելով նաև Լոռու մարզի Սպիտակ քաղաքում:

«Սիրիահայ Երիտասարդների Պայծառ Ապագա»

«Սիրիահայ երիտասարդների պայծառ ապագա» Ծրագրի նպատակն է սիրիական հակամարտության հետևանքով Հայաստանում ապաստանած սիրիահայ երիտասարդներին տրամադրել նոր գիտելիքներ և հմտություններ՝ նպաստելով նրանց զարգացմանը և հայաստանյան քաղաքացիական կյանքում ինքնաիրացմանը, տրամադրելով հոգեբանական աջակցություն, ինչպես նաև տրամադրելով ֆինանսական աջակցություն սիրիահայ ուսանողներին և պրակտիկանտներին, կազմակերպով ուխտագնացություններ և ամառային ճամբարներ, այդ ամենով նպաստելով երիտասարդների ինտեգրմանը Հայաստանում: Իրականացված կարողությունների զարգացմանը նպաստող դասընթացներից են ճարտարապետական ծրագրերի ուսուցում, խոսակցական անգլերենի, առաջին օգնություն և Microsoft Office-ի դասընթացներ:

«Սիրիահայ երիտասարդների պայծառ ապագա» ծրագիրն իրականացվում է «Հալեպ» ՀԿ-ի և ԵՀԽ հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի կողմից:

«Արևիկ-Հայաստան» մտավոր և ֆիզիկապես թերաճ անձանց կենտրոն

«Արևիկ» կենտրոնը շուրջ 13 տարի գործել է Սիրիայի Հալեպ քաղաքում երեք համայնքապետերի հովանավորությամբ, սակայն սիրիական պատերազմի պատճառով ստիպված դադարեցրել է իր գործունեությունը:

Սիրիական հակամարտության հետևանքով ծանր կացության և անապահովության հետևանքով Հայաստան տեղափոխված «Արևիկ»-ի սաները և ուսուցիչները

«ՀԱԼԵՊ» կազմակերպության շնորհիվ նորից համախմբվել են, և արդեն «Արևիկ-Հայաստան» դարձած կենտրոնի աշխատանքներն իրենց

շարունակությունն են գտել

«ՀԱԼԵՊ» ՀԲՀԿ-ի կենտրոնում 2014թ. հոկտեմբերի 1-ից:

«Արևիկ-Հայաստան» կենտրոնը անվճար հիմունքներով աջակցություն է ցուցաբերում *Հայաստանում ապաստան գտած մտավոր և ֆիզիկապես հաշմանդամության խնդիրներ ունեցող սիրիահայերին*, նպատակ ունենալով դյուրացնել նրանց առօրյան և աջակցել նրանց ներգրավվածությանը հասարակական կյանքում:

«ՀԱԼԵՊ» ՀԲՀԿ-ի «Արևիկ-Հայաստան» կենտրոնը գործում է ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Կենտրոնի սաներն անվճար ստանում են հոգեբանական աջակցություն և մասնակցում են հատուկ ուսուցողական դասընթացների, ինչպիսիք են մաթեմատիկայի, նկարչու- թյան, երաժշտական, ֆիզիկական դաստիարակության, թատրոն- թերապիայի, խոսքի զարգացման և ձեռագործ աշ- խատանքների պատրաստման դասընթացները: Վերո- հիշյալ դասընթացներն իրականացվում են մի խումբ նվիր- յալ սիրիահայ ուսուցիչների և աշխատակազմի կողմից:

Արևելյան խոհանոցի հիմնում

Նկատի ունենալով սիրիահայերի, մասնավորապես սիրիահայ կանանց շրջանում առկա գործազրկության բարձր մակարդակը և հաշվի առնելով նրանց

հիմնական կարողություններից խոհարարական հմտությունների տիրապետումը՝ «ՀԱԼԵՊ» ՀԲՀԿ-ը հիմնում է արևելյան ուտեստների խոհանոց, որը նպատակ ունի ստեղծել աշխատատեղեր սիրիահայ կանանց համար և նպաստել նրանց տնտեսական ու սոցիալական զարգացմանը Հա-յաստանում: Մենդի արտադրամասի հիմնումը նպատակ ունի նաև խթանել հատուկ կարիքներ ունեցող սիրիա- հայերի ներգրավումը քաղաքացիական կյանքում:

Ծրագրի շահառուներն են՝ գործազուրկ սիրիահայեր, հատուկ կարիքներ ունեցող սիրիահայեր:

Սոցիալ-հոգեբանական աջակցություն սիրիահայերին

«ՀԱԼԵՊ» ՀԲՀԿ-ը իրականացնում է սոց-հոգեբանական աջակցություն ցուցաբերող ծրագիր, որի նպատակն է *Սիրիայի հակամարտության հետևանքով հարազատ կորցրած և նյութական վնաս կրած անձանց* տրամադրել սոցիալ-հոգեբանական աջակցություն:

Սոց-հոգեբանական աջակցությունը ցուցաբերվում է յուրաքանչյուր ուրբաթ օր: Հավաքներին իրենց մասնակցու-թյունն են բերում ԱՀԹ քահանան և տարբեր խոսնակներ, ովքեր ոչ միայն տրամադրում են հավաքի մասնակիցներին սոց-հոգեբանական աջակցություն, այլև նպաստում են նրանց կրթական, գիտական զարգացմանը ու աջակցում տվյալ սիրիահայերի ինքնաիրացմանը հայաստանյան քաղաքացիական կյանքում:

Բիզնես անգլերենի անվճար առցանց դասընթացներ

Բիզնես անգլերենի անվճար առցանց դասընթացները կազմակերպվում են «Yerevan MOOC Camp Coursera for refugees» ծրագրի շրջանակում: Դասընթացների նպատակն է *ՀՀ-ում գտնվող տեղահանված անձանց, ինչպես նաև տեղաբնակներին* տրամադրել բիզնես անգլերենի (Basic Business English, Business English and English for Business and Entrepreneurship) անվճար առցանց դասընթացներ՝ օժանդակելու անգլերեն լեզվի իմացության բարելավմանը և նպաստելու տեղահանված անձանց և տեղաբնակների սոցիալ-տնտեսական ներգրավմանը հայաստանյան քաղաքացիական կյանքում: Դասընթացները կազմակերպվում են ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության աջակցությամբ:

(Մշակութային ինտեգրում)

Մանկապատանեկան հավաքներ սիրիահայ մանուկների և պատանիների համար

Ծրագրի նպատակն է կազմակերպել *սիրիական հակամարտության հետևանքով Հայաստանում ապաստանած սիրիահայ մանուկների և պատանիների* ազատ ժամանակը, տրամադրել գիտելիքներ և հմտություններ, որոնք անձի զարգացման համար մեծ նշանակություն ունեն, նպաստել նոր սերնդի ազգային, հայրենասիրական ոգով դաստիարակմանը և մշակութային արժեքների հետ ծանոթացմանը: Մանկապատանեկան հավաքներն անց են կացվում ամեն շաբաթ օր 4-ից 9-ը և 10-ից 16 տարեկան սիրիահայ մանուկների և պատանիների համար:

(Հումանիտար)

«Տարուկ Չմեռ» ծրագրի շրջանակում տարատեսակ մար- դասիրական օգնության (հագուստ, կոշիկ, պարեն, հիգիեն- նիկ պարագաներ, դրամային օգնություն) փաթեթներ են տրամադրվում կազմակերպության 6100 շահառուներին: Ծրագրի շրջանակում մարդասիրական օգնությունը տրա- մադրվում է ամբողջ տարվա ընթացքում:

«Որդեգրե ընտանիք մը»

2015 թվականի հունիս ամսից «ՀԱԼԵՊ» ՀԲՀԿ իրականաց- նում է «Որդեգրե ընտանիք մը» մարդասիրական շտապ օգնության ծրագիրը, որի նպատակն է ստեղծել հարթակ անհատ բարերարների համար՝ «ՀԱԼԵՊ» ՀԲՀԿ-ի միջոցով կապ հաստատելու կարիքավոր սիրիահայ ընտանիքների հետ՝ նրանց «որդեգրելու» և ամսական 100-ից 200 դոլար ֆինանսական օգնություն ցուցաբերելու համար: Ֆինանսա- կան օգնությունը նախատեսված է կենցաղային ծախսերը (վարձավճար, կոմունալ, սնունդ և այլն) հոգալու համար: Այս ծրագիր նպատակն է նաև խթանել Հայաստանում սիրիահայ ընտանիքների հաստատմանը և ինտեգրմանը: *Ծրագիրը ներառում է կարիքավոր սիրիահայ ընտանիք- ների, ովքեր գտնվում են առավել խոցելի դրությունում, ունեն հատուկ կարիքներ, առողջական լուրջ խնդիրներ, բազմանդամ են կամ միայնակ ծնողներ են:*

Վերադարձ Հայաստան հիմնադրամ

Հասցե. Երևան, Մելիք Ադամյան 2/2

Հեռ. 093 77 84 34

Էլ. փոստ. contact@repatarmenia.org

Աջակցման շրջանակ

(Սոցիալ-տնտեսական ինտեգրում)

2016թ IDeA հիմնադրամը հանդես եկավ նախաձեռնությամբ, որը միտված էր անմիջական աջակցություն ապահովել Սիրիայում ռազմական կոնֆլիկտից տուժած հայ համայնքի ներկայացուցիչներին՝ օգտագործելով միջազգային, կառավարական և հասարակական հնարավոր հարթակները: 250,000 ԱՄՆ դոլար նախնական հանգանակությամբ սկսված նախաձեռնությունը, որի հիմքում դրվեց Սիրիայում բնակվող, Սիրիայից հեռանալ ցանկացող և արդեն Հայաստանում վերահաստատված սիրիահայ ընտանիքների բազմաշերտ աջակցությունը, իրականացվեց «Վերադարձ Հայաստան» հիմնադրամի, «Առաքելություն Հայաստան», «ՀԲԸՄ» և «ՀԱԼԵՊ» հայրենակցական բարեսիրական կազմակերպությունների միջոցով:

«ՀԲԸՄ»՝ աջակցություն Սիրիայում բնակվող հայերին
«ՀԱԼԵՊ Հայրենակցական Բարեսիրական
կազմակերպություն» օժանդակություն
Հայաստան տեղափոխվել ցանկացող հայերին
«Վերադարձ Հայաստան հիմնադրամ»՝ աջակցություն
Հայաստանում ինտեգրացիայի գործընթացներում
«IDeA հիմնադրամ» օժանդակություն

«Վերադարձ Հայաստան» հիմնադրամը որպես ինտեգրացիայի, աշխատանքի զբաղվածության և բիզնես օժանդակության գործընթացների աջակից իրականացնում է՝

1. Կողմնորոշման հանդիպում

- Հայրենադարձների և Հայաստանում բնակվող սիրիահայերի միջոցով հայաստանյան կենսակերպի նկարագրում/քննարկում,
- ՀՀ քաղաքացի դառնալու դեպքում ընձեռնված առավելությունների քննարկում,
- ՀՀ կառավարման համակարգի, գործակալությունների, օրենքների ու կարգավորումների, ընտանեկան բյուջեի և բիզնեսի գրացման գործընթացների հակիրճ նկարագրում,
- ՀՀ առաջընթացի ներկայացում,
- Հայաստանում աշխատանք փնտրելու ձևերի և միջոցների նկարագրում /լավագույն կայքեր և մեթոդներ/,
- Զբաղվածության մեծ ցուցանիշ ունեցող ոլորտների և վերապատրաստման կենտրոնների ներկայացում:

2. Կարիքների գնահատում

- Անհատական հանդիպումների ապահովում, որտեղ քննարկվում են դիմորդին հուզող ինտեգրացիոն բոլոր հարց ու պատասխանները:

3. Քաղաքացիություն/Կացության աջակցություն

Կամավորի տրամադրում ՕՎԻԲ-ում՝ տեղում աջակցելու քաղաքացություն կամ կացության քարտ ձեռք բերող սիրիահայերին:

Ներառում է՝

- Փաստաթղթերի թարգմանություն և նոտարի այցելություններ
- Փաստաթղթերի լրացում
- Տեղում թարգմանություն արևելահայերեն/արևմտահայերեն/ ռուսերեն լեզուների միջև:

4. Աշխատանքային զբաղվածության աջակցություն

Աշխատանքային զբաղվածության նախապայման համարվող ինքնակենսագրականը սիրիահայ դիմորդի համար որպես կանոն այդպիսին չի համարվել: Ունենալով մեծ փորձ Հայաստանում ընդունելի ինքնակենսագրականի լրացման/ձևավորման/թարմացման մեջ, «Վերադարձ Հայաստան» հիմնադրամը գրել և կամ փոփոխել է դրանք:

Սիրիահայերի համար աշխատանքային զբաղվածությունն ապահովելու նպատակով «Վերադարձ Հայաստան» հիմնադրամը կազմակերպել է՝

- Հանդիպում NDigitec ընկերության HR-ի և երիտասարդ սիրիահայերի միջև
- «Միացի՛ր Ucom»-ին նախաձեռնություն, իրականացված Ucom-ի և «Վերադարձ

- Հայաստան» հիմնադրամի հետ համագործակցությամբ
- Մասնագիտական փորձառնության հնարավորություն «Ռուսոստրախ» և «Agent +50 project» ընկերությունների կողմից սիրիահայերի համար
 - Խոհարարական /տներում և հեռակա/ համագործակցություն ամերիկացի էքսփաթների հետ,
 - Ծրագրավորման դասընթացներ Armenian Code Academy-ում,
 - Ձեռագործության և կարի դասընթացներ Սիրիահայերի միության հետ և հետագայում HDIF ընկերության մոտ աշխատանքի հնարավորություն,
 - Համագործակցություն սիրիահայ արհեստավորների՝ ոսկերիչների, արծաթագործների, ձեռագործություններ և HDIF-ի միջև:

5. Բիզնես տեղեկատվության տարածման աջակցություն

«Վերադարձ Հայաստան» հիմնադրամի կողմից հիմնված «Siramark Business Directory»-ն ստեղծման նախնական շրջանում նպատակ ուներ ընդգրկել Հայաստանում գործող սիրիահայ բոլոր բիզնեսների մասին տեղեկատվություն: Այժմ, սակայն, այն վերածվել է երկրում առկա հայրենադարձ գրեթե բոլոր բիզնեսների տեղեկատվության տարածման հարթակի, որոնց

մասին տեղեկությունները դրվում են նաև
«Վերադարձ Հայաստան» հիմնադրամի
պաշտոնական կայքում:

Պոտենցիալ շահառուներ

Սիրիայում ռազմական կոնֆլիկտից տուժած հայ
համայնքի ներկայացուցիչներին:

«Վորլդ Վիժն» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ

Հասցե. Երևան, Ռ. Մելիքյան 1, Մալաթիա-Մեքաստիա

Հեռ. 010 74 91 18

Էլ. փոստ. wvarmenia@wvi.org

Աջակցման շրջանակ

(2017թ-ի հոկտեմբերից մինչև 2018թ.-ի սեպտեմբեր)

(Սոցիալ-տնտեսական ինտեգրում)

Նպատակ: Աջակցել տեղահանված և հակամարտության հետևանքով տուժած անձանց համար զբաղվածության հնարավորությունների և ապրուստի միջոցների հասանելիության բարձրացմանը Հայաստանում:

Վայրեր: Երևան, Չարենցավան (Կոտայքի մարզ), Դարբնիկ (Արարատի մարզ) և հարակից համայնքներ **Աջակցության ուղղություններ.**

Աշխատանքի տեղավորում`

- աշխատանք փնտրողների ծանոթացում պոտենցիալ գործատուների հետ,
- մասնագիտական վերապատրաստման դասընթաց- ների կազմակերպում,
- աշխատանքի ընդունված շահառուներին շարունակական աջացություն, խորհրդատվություն,
- աշխատանք փնտրողների և գործատուների խրա- խուսում:

Փոքր բիզնես խրախուսում՝

- Բիզնես պլանավորման դասընթացների կազմա- կերպում,
- Գործող և սկսնակ բիզնեսների բիզնես շարունակա- կան խորհրդատվություն,

Երիտասարդների հետ աշխատանք (SKYE ակումբներ)՝

- Մոցիալական ձեռներեցության և աշխատունակու- թյան վերաբերյալ դասընթացներ,
- Հնարավորություններ աշխատանք գտնելու կամ բիզնես սկսելու համար,
- Համակարգչային անկյունների ստեղծում Երևան, Չարենցավան և Դարբնիկ համայնքներում:

Պոտենցիալ շահառուներ

Տեղահանված և հակամարտության հետևանքով տուժած անձինք:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակ

Հասցե. [Երևան, Զաքիյան 7-2, 2-րդ հարկ](#)

Հեռ. [010 60 07 14, 010 60 46 05](#)

Էլ. փոստ. pashtpan@advocates.am

Աջակցման շրջանակ

Հանրային պաշտպանի գրասենյակը (կրճատ ՀՊԳ) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում սոցիալապես անապահով խավերին օրենքով նախատեսված կարգով ու դեպքերում անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու համար:

ՀՊԳ-ում աշխատող հանրային պաշտպանը փաստաբան է, որը գործում է գրասենյակի ղեկավարի ներկայացմամբ՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի հետ կնքած աշխատանքային պայմանագրի հիման վրա: Հանրային պաշտպանը վարձատրվում է պետական բյուջեից օրենքով սահմանված չափով և կարգով:

Քրեական գործերով անվճար իրավաբանական օգնությունն իրականացվում է վարույթն իրականացվող մարմնի որոշման հիման վրա ՀՊԳ ղեկավարի կողմից հանրային պաշտպանի նշանակման միջոցով: Քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով՝ անվճար իրավաբանական օգնությունը տրամադրվում է քաղաքացիների դիմումների հիման վրա ՀՊԳ ղեկավար կողմից օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

Պոտենցիալ շահառուներ

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն անվճար իրավաբանական օգնություն կարող են ստանալ.

- 1) Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամները.
- 2) 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամները.
- 3) դատապարտյալները.
- 4) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամները.
- 5) Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնա-կիցները.
- 6) գործազուրկները.
- 7) միայնակ բնակվող կենսաթոշակառուները.
- 8) առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք.
- 9) փախստականները.
- 10) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր պաշտպանություն ստացածները.
- 11) անվճարունակ այն ֆիզիկական անձինք, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում: Սույն

կետի իմաստով անվճարունակ է համարվում այն ֆիզիկական անձը, որը չունի բավարար եկամուտ, համատեղ բնակվող աշխատող ընտանիքի անդամ, ինչպես նաև բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն չունի այլ անշարժ գույք կամ նվազագույն աշխատավարձի հազարապատ- տիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց.

- 12) հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձինք.
- 13) օրենքով սահմանված կարգով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված գոհերի նույնացման հանձնաժողովի կողմից գոհ կամ հատուկ կատեգորիայի գոհ ճանաչված անձինք.
- 14) Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողները.
- 15) խոշտանգումից տուժած անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով սահմանված կարգով փոխ- հատուցում ստանալու նպատակով:
- 16) «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ընտանիքում բռնության ենթարկված անձանց:

Անվճար իրավաբանական օգնություն ցույց չի կարող տրվել սույն հոդվածի 5-րդ մասում նշված անձանց՝

- 1) ձեռնարկատիրական բնույթի գործերով (ներառյալ՝ կորպորատիվ վեճերով)։
- 2) նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գույքային (գումարի) պահանջով գործերով, բացառությամբ այն գործերի, որտեղ անձը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ։
- 3) եթե առկա են դիմող անձի անվճարունակությունը ժխտող փաստական հավաստի տվյալներ։

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ

Հասցե. Երևան, Պուշկին 56 ա

Հեռ. 010 53 76 51

Թեժ գիծ. 116

Էլ. փոստ. ombuds@ombuds.am

Աջակցման շրջանակ

(Իրավականաջակցություն
ն)

Մարդու իրավունքների պաշտպանը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց, ինչպես նաև հանրային ծառայությունների ոլորտում գործող կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, ինչպես նաև նպաստում է նշյալ կառույցների կողմից խախտված իրավունքների վերականգնմանը:

Պոտենցիալ շահառուներ

Պաշտպանին դիմելու իրավունք ունի յուրաքանչյուր ոք, ներառյալ տեղահանված անձինք, ինչպես նաև յուրաքանչյուր իրավաբանական անձ:

ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն հիմնադրամ

Հասցե. [Երևան, Մհեր Մկրտչյան 5 ա](http://www.smednc.am)

Հեռ. [012 54 16 48](tel:012541648), [012 56 37 14](tel:012563714), [012 58 32 61](tel:012583261), [010 23 71 02](tel:010237102)

Էլ. փոստ. info@smednc.am

Աջակցման շրջանակ

(Սոցիալ-տնտեսական ինտեգրում)

- Միրիահայերի ձեռնարկատիրական գործունեության համալիր խթանում՝
 1. ձեռնարկատիրական հմտությունների դասընթացներ (1 ամիս),
 2. դասընթացների փուլի ավարտից հետո ներկա- յացված գործարար ծրագրերի վերանայում, հաս- տատում և խորհրդատվության տրամադրում 6 ամսվա ընթացքում,
 3. վարկային պարտավորությունների կատարման վերաբերյալ երաշխավորման նամակով միջ- նորդության արդյունքում ցածր տոկոսադրույքով (4%) վարկերի տրամադրման ապահովում սկս- նակ բիզնեսների համար,
 4. շահառուների կողմից վարկային պարտավորու- թյունների մարման անհնարինության դեպքում, տվյալ վարկերի մարում՝ արտոնյալ պայման- ներով վարկի մարման վերաբերյալ համա- ձայնագրի հիմքով:

Պոտենցիալ շահառուներ
Մի րիայից տեղահանված
հայեր:

«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ

Հասցե. Երևան, Գարեգին Նժդեհի 42

Հեռ. 010 44 47 92, 010 44 47 61

Էլ. փոստ. org@ngo.mission.am

Աջակցման շրջանակ

(Հումանիտար, իրավական , սոցիալական եւ առողջապահական աջակցություն)

Օրագիրը՝ «Սոցիալական, բժշկական, իրավաբանական և կացարանային աջակցության տրամադրում Հայաստանում գտնվող փախստականներին եւ ապաստան հայցողներին»

Թիրախ խմբերը. Փախստական, ապաստան հայցող, փախստականի նման իրավիճակում գտնվող (Սիրիա, ԼՂ) եւ քաղաքացիություն չունեցող անձինք

Ծառայությունները

- Սոցիալական ծառայություններ (ինտեգրմանն ուղղված դեպքի վարումներ, խորհրդատվություն, միջնորդումներ եւ այլն),
- Խնամքի ծառայություններ (անկողնային և սահմանափակ շարժունակ անձանց խնամք ըստ անհրաժեշտության)
- Առողջապահական ծառայություններ (բժշկի խորհրդատվություն, դեղորայքի տրամադրում, անհրաժեշտության դեպքում բուժման եւ հետազոտության կազմակերպում)
- Հումանիտար աջակցություն (դրամական եւ ոչ դրամական/ հիգիենիկ, անկողնային պարագաներ, սնունդ, հագուստ և այլն տրամադրում)

- Կացարանային աջակցություն (կացարանի հարցի լուծում բնակարանների վարձավճարի մասնակի փոխհատուցման և սոցիալական բնակեցման միջոցով)
- Իրավաբանական աջակցություն
- Թիրախային խմբի շահերի պաշտպանություն
- Համայնքային մոբիլիզացում

Շրագիրք՝ «Հոգեբանական աջակցություն Սիրիայից տեղահանված բնակչությանը»

Թիրախ խմբերը. Սիրիայից տեղահանված կանայք, երիտասարդներ, երեխաներ, մեծահասակներ Օտարությունները

- Անհատական հոգեբանական խորհրդատվություն,
- Խմբային հոգեբանական աշխատանք,
- Դասընթացներ ծնողների, ուսուցիչների համար (ծնողավարություն),
- Անձնային աճին ուղղված թրեյնինգներ,
- Տեղեկատվական աջակցություն,
- Ինտեգրմանն ուղղված քննարկումներ տարբեր թեմաներով:

«ԿԱԶԱ» շվեյցարական

մարդասիրական հիմնադրամ

Հասցե Երևան, Նալբանդյան 29

Հեռ. 010 54 18 44, 077 54 18 44

Էլ. փոստ. espaces@kasa.am

Աջակցման շրջանակ

(2018թ. -ի հուլիսից մինչև 2018թ. -ի դեկտեմբեր)

(Սոցիալ-տնտեսական ինտեգրում)

- Հայերեն (միայն հատուկ կացարանի բնակիչների համար), ռուսերեն լեզուների կարճաժամկետ (3 ամիս մեկ մակարդակի համար, տարվա մեջ 2 անգամ) դասընթացների կազմակերպում,
- Համակարգչային հմտություններ (1 ամիս)
- «Երկուսով աշխատանքի համար» ծրագրի շրջանակներում Կամավորը աջակցում է շահառուին աշխատանք գտնելու հարցում,
- Զվճարվող պրակտիկայի հնարավորություն 3 ամսով

(Սոցիալ-մշակութային ինտեգրում)

- «Միացիր համայնքին» ծրագրի շրջանակներում Կամավորները աջակցում են Հատուկ Կացարանում բնակվող շահառուներին միջմշակութային ինտեգրման հարցում:

Պոտենցիալ շահառուներ

Հայաստանում ապաստան հայցողի կամ փախստականի կարգավիճակ ունեցող տեղահանված անձինք, ինչպես նաև ԼՂՀ-ից ներքին տեղահանված անձինք:

**«Հայկական Կարիտաս» բարեգործական
հասարակական կազմակերպություն, Երևանի
գրասենյակ**

Հասցե. Երևան, Չայկովսկի 34, բն. 23

Հեռ. 010 56 57 66

Էլ. փոստ. l.stepanyan@caritas.am

Աջակցման շրջանակ

(2017թ.-ի հունվարից մինչև 2019թ.-ի դեկտեմբեր)

(Իրավական և սոցիալ-տնտեսական ինտեգրում)

Ծրագրի անվանում՝ «Ճանաչել: Պաշտպանել:

Իրագործել» Ծրագրի գործընկերներ՝

Եվրոպական Միություն, Կարիտաս Ավստրիա,
Կարիտաս Լիբանան

Ընդհանուր նպատակը՝ Նպաստել ապաստան հայցող-
ների, փախստականների և միգրանտների՝
մարդու իրավունքների պաշտպանությանը
Լիբանանում և Հայաստանում.

- իրավաբանական խորհրդատվություն,
- քարոզչական, տեղեկատվական նյութերի
(փախս-տականներին աջակցություն
ցուցաբերող կազմակերպությունների,
փախստականների կարգավիճակի և
իրավունքների մասին գրքույկի, բուկլետի)
մշակում,
- հիմնական շահագրգիռ կողմերի հետ համատեղ
Հայաստանում փախստական ընտանիքների
համար իրազեկման հանդիպումների
իրականացում,
«Թեժ գիծ» տեղեկատվական ծառայություն

- սի- րիահայերի համար,
- լեզվի դասընթացներ (արևելահայերեն, ռուսերեն, անգլերեն) սիրիահայերի, սիրիացիների, տեղահանված այլ անձանց համար,
 - աջակցություն զբաղվածության ապահովմանը՝ գործիքների տրամադրման միջոցով,
 - բիզնես աջակցություն՝ դասընթացների, ուղղորդման և բիզնես ինկուբացիայի միջոցով,
 - դասընթացներ սիրիահայ երիտասարդության համար՝ ուղղված մարդու իրավունքների հարցերի շուրջ իրազեկվածության բարձրացմանը (ճամբարի միջոցով):

Պոտենցիալ շահառուներ

Խոցելի փախստական ընտանիքներ, ապաստան հայցողներ, միգրանտներ և տեղահանված այլ անձիք:

Հայկական Կարմիր խաչի ընկերություն

- Այցելություններ և աջակցություն ապաստան հայցողներին Հատուկ կացարանում և անհատական բնակարաններում
- Տեղեկատվական հանդիպումներ (Երևանում և ՀՀ մարզերում)
- Աշխատանքի խորհրդատվություն
- Եկամտաբերությունը խթանող ծրագրեր (գործիքների տրամադրում), բիզնես կողմնորոշում և ուղղորդում)
- Աջակցություն գենդերային բռնությունից և այլ տրավմաներից տուժածներին, իրազեկության բարձրացմանն ուղղված գործունեություն
- Վերարտադրողական առողջության վերաբերյալ դասընթացներ
- Հոգեբանական աջակցություն
- Սահմանապահների և քրեակատարողական հիմնարկների ներկայացուցիչների կարողությունների զարգացում և այցեր սահմանակետեր
- Դասընթացներ մեդիա ներկայացուցիչների համար
- Բնակվարձերի մասնակի փոխհատուցում
- Աշխատանքի տեղավորում
- Սիրիահայերի հիմնախդիրները լուծելու նպատակով երեխաների, ուսուցիչների և այլ շահագրգիռ կողմերի

կարողությունների քարելավում
հանդուրժողականությանը և հոգեբանական առաջին
օգնությանը վերաբերվող վերապատրաստման
դասընթացների միջոցով:

Հասցե՝ Պարոնյան փ. 21/1, Երևան, ՀՀ
Հեռ.՝ (060) 62-50-63, (055) 65-50-65
Էլ-փոստ՝ arcs-pm@redcross.am

Պոտենցիալ շահառուներ

Հայաստանում ապաստան հայցողի կամ փախստականի
կարգավիճակ ունեցող և քաղաքացիություն չունեցող
անձինք (անկախ ազգությունից), ինչպես նաև Սիրիայից և
ԼՂՀ-ից տեղահանված անձինք:

Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ

Հասցե. [Երևան, Խորենացի](#)

22

Հեռ. [060 52 66 60](#)

Աջակցման շրջանակ

(Սոցիալ-տնտեսական ինտեգրում)

- «Միրիահայ գործարարներին աջակցություն» ծրագիրն աջակցում է Հայաստանում սեփական փոքր կամ ընտանեկան բիզնես հիմնած կամ պատրաստող սիրիահայ հայրենադարձներին: Մրցութային հիմքով ընտրված սիրիահայ գործարարներին ՀՕՖ-ը տրամադրում է փոխկապակցված դրամաշնորհներ և նպատակային փոխառություններ:
- Կրթավճարներ են տրամադրվում ՀՀ բուհերում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում լավ առաջադիմություն ունեցող և սոցիալապես անապահով ուսանողներին:
- Բնագիտական առարկաների տերմինաբանությանը տիրապետելու, ինչպես նաև առարկայական դժվարությունները հաղթահարելու նպատակով դպրոցահասակ երեխաների համար կազմակերպվում են երկարօրյա դասընթացներ:

(Մշակութային ինտեգրում)

- Ամառային ամիսներին հանգստանալու,

կազդուր- վելու, ինչպես նաև տեղացի երեխաների հետ ընկերանալու և միջավայրին սահուն ինտեգրվելու նպատակով սիրիահայ երեխաների համար կազմակերպվում է ամառային ճամբար:

(Հումանիտար)

- Հայաստանում հաստատված սիրիահայերի սոցիա- լական կարիքները մեղմելու համար տրամադրվում է հումանիտար աջակցություն:

Պոտենցիալ շահառուներ

Հայաստանում ապաստանած սիրիահայեր:

Հայկական բարեգործական ընդհանուր միություն

Հասցե. Երևան, Մելիք Ադամյան

2/2

Հեռ. 060 72 22 10

Էլ. փոստ. nune@agbu.am

Աջակցման շրջանակ

(Իրավական և սոցիալ-տնտեսական ինտեգրում)

- **ՀՀ բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սիրիահայ ուսանողների ուսման վարձավճարների փոխհատուցման ծրագիր**

Մեկնարկել է 2013թ. և գործում է մինչ օրս: Ծրագրին կարող են դիմել ՀՀ բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող մինչև 30 տարեկան սիրիահայ ուսանողները: Ծրագիրն իրականացվում է ՀՀ սփյուռքի նախարարության, ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀԲԸՄ-ի, «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի և Լոնդոնի Մբ. Սարգիս բարեգործական հիմնադրամի համատեղ միջոցներով:

- **Գյուղատնտեսական աջակցություն (գյուղտեխնիկ կայի, սերմերի, վառելիքի տրամադրում)**

Ծրագիրը մեկնարկել է 2014թ., որի շրջանակներում Հայաստանի սահմանամերձ գյուղերում վերաբնակեցված սիրիահայ ընտանիքներին տրամադրվում է գյուղտեխնիկա, սերմեր,

վառելանյութ:

(Մշակութային ինտեգրում)

- Մշակութային նախաձեռնությունների ֆինանսավորում/ կազմակերպում (համերգ, ցուցահանդես, գրքի հրատարակչություն),
- Մշակութային/ամանորյա միջոցառումներ սիրիահայ երեխաների համար
Մեկնարկ՝ 2012թ.:

(Հումանիտար)

- **ՀԲԸՄ «Քլոտիա Նազարեան» բժշկական կենտրոն սիրիահայերի համար**
Բժշկական կենտրոնը գործում է 2017թ. ապրիլից, որտեղ բժշկական խորհրդատվական անվճար ծառայություններ են ստանում բազմաթիվ սիրիահայեր: Կենտրոնում գործում են ակնաբուժական, գինեկոլոգիական, սրտաբանական ու մանկաբուժական բաժանմունքներ: Միությունն այժմ աշխատանքներ է տանում կենտրոնում քիթ-կոկորդ-ականջ հիվանդությունների բաժանմունք բացելու համար լիցենզիա ստանալու ուղղությամբ:
- **Վիրահատության և դեղորայքի գումարների փոխհատուցում**
Ծրագիրը մեկնարկել է 2012թ.-ին:
Սիրիահայերը բժշկական հաստատություն

դիմելուց հետո (ներառյալ ՀԲԸՄ «Քլոտիա Նազարեան» բժշկական կենտրոն) բժշկի ցուցումով կարող են դիմել «Միրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ, եթե ծախսը չի հոգում պետությունը: Այնուհետև կենտրոնից հիվանդները ուղղորդվում են ՀԲԸՄ Հայաստան և ստանում իրենց աջակցությունը/փոխհատուցումը:

Պոտենցիալ շահառուներ

Միրիահայեր:

Ջինիշյան հիշատակի հիմնադրամ

Հասցե. Երևան, Արուսյան 34, բն. 5

Հեռ. 010 56 70 58, 010 52 58 09, 010 54 44 17, 010 54 44 18

Էլ. փոստ. jmf@jinishian.am

Աջակցման շրջանակ

(Սոցիալ-տնտեսական ինտեգրում)

- Սիրիահայ փախստական ընտանիքների ձեռնարկատիրական գործունեության համալիր խթանում (Վորլդ Վիժնի հայաստանյան ներկայա-ցուցչության հետ համատեղ), որը նախատեսում է թե՛ անվճար տեխնիկական և թե՛ ֆինանսական աջակցություն սկսնակ և դեռ նոր պլանավորվող բիզնեսների համար: Նախաձեռնության շրջանակ-ներում հիմնադրամը հիմնականում կտրամադրի ցածր տոկոսադրույքով վարկեր երիտասարդ սիրիահայ փախստականներին՝ ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու նպատակով:

Պոտենցիալ շահառուներ

Սիրիական հակամարտության հետևանքով տեղահանված և Հայաստանում պաշտպանություն հայցող ինքնույթամբ հայ երիտասարդներ՝ մինչև 35 տարեկան:

ՍՕՍ մանկական գյուղեր ՀԲՀ

Հասցե. Երևան, Դավիթ Անհաղթ
11

Հեռ. 093 32 89 60

Էլ. փոստ. Anush.Khachatryan@sos-kd.am

Աջակցման

շրջանակ

(Հումանիտար)

- Արտակարգ իրավիճակում հայտնված սիրիահայ ընտանիքիների աջակցություն,
- Տան վարձ և կոմունալ վարձերի փոխհատուցում, նյութական աջակցություն, առողջական, կրթական աջակցություն, տնտեսական կայունացում,

Պոտենցիալ շահառուներ

Սիրիահայ ընտանիքներ, որտեղ կան
անչափահաս երեխաներ:

«Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպություն

Հասցե. Երևան, Մեգրուհ 2/1,

Հեռ. 060 525 535

Էլ. փոստ. wsc.armenia@gmail.com

Թեժ գիծ 099-88-78-08

Աջակցման շրջանակ

(2018թ.-ի հունվարից մինչև 2018թ.-ի դեկտեմբեր)

Տրամադրվում է հետևյալ ծառայությունները անվճար

- Ընտանեկան բռնության պատճառով կյանքին վտանգ սպառնալու պարագայում՝ կանանց և իրենց երեխաներին ապահով կացարան մինչև 3 ամիս ժամկետով՝ ժամկետի երկարացման հնարավորությամբ,
- Սոցիալական խորհրդատվություն և աջակցություն,
- Իրավաբանական խորհրդատվություն,
- Փաստաբանական ծառայություն և շահերի պաշտպանություն դատարանում
- Հոգեբանական խորհրդատվություն կանանց և երեխաներին:
- Թեժ գիծ – 24/7

Պոտենցիալ շահառուներ

Ընտանեկան բռնության ենթարկված կանայք և երեխաներ՝ անկախ կարգավիճակից:

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամ (ՀԿՍ)

Հասցե. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1101

Հեռ. 010 51 71 57, 010 51 72 16

Էլ. փոստ. info@roundtable-act.am

Աջակցման շրջանակ

(Հումանիտար օգնություն)

- Աջակցություն սիրիահայերին Հայաստանում 2012-2013թթ.
- Աջակցություն հակամարտությունից տուժած քեսաբահայ ընտանիքներին -2014թ.
- 2012-2013 թթ. – Հումանիտար օգնություն 6000 փախստականների համար Հայաստանում պլաստիկ քարտերի միջոցով, ինչպես նաև սննդամթերքով, ոչ պարենային ապրանքներով՝ գրենական պիտույքներ, հիգիենիկ պարագաներ, մանկական հագուստ, վերմակներ և այլն.
- 2014 թ. - հումանիտար օգնություն Լաթաքիայում, Սիրիա՝ Քեսաբի 2500 տեղահանվածների համար, հանրային քննարկումների իրականացում
- Սոցիալ-հոգեբանական աջակցություն

(Սոցիալական աջակցություն, 2015-2018 թթ.)

- Սոցիալ-հոգեբանական աշխատանք հոգեբանի (մասնավոր եւ խմբային) կողմից՝ ավելի քան 700 սիրիահայերի համար
- Տնային այցելություններ եւ կարիքների

զնահատում

- Բարոյահոգեբանական աջակցություն՝ մարդասիրական օգնություն, տարբեր միջոցառումներ, ուխտագնացություններ, խորհրդատվություն ավելի քան 2500 սիրիահայերի համար
- Հանրային իրազեկման բարձրացում - ավելի քան 500 սիրիահայերի համար

- Վավերագրական ֆիլմերի նկարահանում

- Վերբառիմ թատրոն (փաստավավերագրական) - «Մանանա» (6 ներկայացում)

(Տնտեսական հզորացում, 2015-2017թթ.)

- Մասնագիտական վերապատրաստումներ՝ ավելի քան 150 սիրիահայերի համար
- - Տեղեկատվական տեխնոլոգիաներ (վեբ և ընդհանուր ծրագրավորում)
- - Կիրառական արվեստներ, լեզուներ
- Աշխատանքային սարքավորումների տրամադրում՝ 55 սիրիահայերի համար
- Աշխատանք ընտանիքների հետ
- Մարքետինգ, աշխատանքային օրենսդրության իրազեկելում
- Մասնակցություն փառատոնների, Մուրբ Ծննդյան շուկաների, ցուցահանդեսների

ՄԻՐԻԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ.
2018 թ. հունվարից

- Կարողությունների զարգացում

Դասընթացներ են կազմակերպվել ավելի քան 80 սիրիահայ երիտասարդների համար հետևյալ թեմաներով՝ անգլերեն, առաջին բուժօգնություն, հոգեբանություն և արդյունավետ հաղորդակցություն, համակարգչային հատուկ ծրագրերի ուսուցում Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ուսանողների համար, Microsoft Office, CV կազմելու դասընթաց:

- Ֆինանսական աջակցություն

10 սիրիահայ ուսանողների ուսման վարձավճարի փոխհատուցում:

- Հոգևոր և հոգեբանական աջակցություն

Ուխտագնացություններ են իրականացվել Տաթև և Նորավանք: 7-օրյա ճամբար Հայ առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի «Օիժեռնակ» ճամբարում. շուրջ 40 շահառուների համար հայրենաճանաչողության, ազգային երգի և պարի, ասմունքի դասընթացների իրականացում: